ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ հայցը ենթակա է մասնակի բավարարման, իսկ Հայցվորի կողմից նախապես 340,500.00 ՀՀ դրամի չափով վճարվել է պետական տուրքի գումարը, Դատարանը եզրահանգում է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հօգուտ «Ա-ԷՆ Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության ենթակա է բռնագանձման 30,000.00 ՀՀ դրամ՝ որպես բավարարված մասով նախապես վճարված պետական տուրքի գումար, իսկ նախապես վճարված պետական տուրքի մնացած մասով դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Անդրադառնալով փաստաբանի խելամիտ վարձատրությանը՝ Դատարանն արձանագրում է, որ «Ա-ԷՆ Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության (Պատվիրատու) և «ՄՈԴԵՌՆ ԼՈՈՒ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊ ընկերության միջև (Կատարող) 2024թ. հուլիսի 25-ին կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման մասին թիվ 1/25 պայմանագիրը, որի համաձայն՝ Կատարողը պարտավորվել է Պատվիրատուի առաջադրանքով մատուցել Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն այդ ծառայությունների դիմաց պարտավորվել է վճարել 400,000.00 ՀՀ դրամ:

Տվյալ պարագայում ներկայացվել է հայց՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու և գումար բռնագանձելու պահանջների մասին, որը ենթակա է մասնակի բավարարման, գործը քննվել է գրավոր ընթացակարգով, որպիսի պայմաններում Դատարանը եզրահանգում է, որ սույն գործով որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար պետք է համարել 70,000.00 ՀՀ դրամը, հետևաբար՝ Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 70,000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Ա-ԷՆ Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ թիվ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/11 պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու և գումար բռնագանձելու պահանջների մասին, բավարարել՝ մասնակի:

Անվավեր ճանաչել 2021թ. օգոստոսի 12-ին կնքված պետության կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման

խորհրդատվական ծառայության մատուցման պետական գնման թիվ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/11 պայմանագրի ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից միակողմանի լուծումը:

Հայցը մնացած մասով մերժել:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հօգուտ «Ա-ԷՆ Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության բռնագանձել 70,000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հօգուտ «Ա-ԷՆ Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության բռնագանձել 30,000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը մնացած մասով համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am